Հայկ Նազարյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պետության թանգարան
nazaryan_h90.90@mail.ru

1826 – 1828 ԹԹ. ՌՈՒՍ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԸ, ԹՎԱԿԱԶՄԸ, ՀԱՄԱԶԳԵՍՏԸ, ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐԸ*

Հիմնաբառեր. Ռուս - պարսկական պատերազմ, Այսրկովկաս, Ռուսական կայսրություն, Ռուսական բանակ, կամավորական ջոկատ, աշխարհազորային դրուժինա, Ներսես արքեպիսկոպոս:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Ռուսական կայսրությունն աստիճանաբար իր տիրապետությունը հաստատեց Այսրկովկասում, այդ թվում՝ Արևելյան Հայաստանում: Այդ գործընթացն արձանագրվեց իրավաքաղաքական հետևյալ փաստաթղթերով. Վրացական թագավորության՝ Ռուսական կայսրության խնամակալության տակ անցնելու մասին 1783 թ. հուլիսի 24-ի Գեորգիևսկյան դաշնագրով (բնագիր տեքստը տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ, 501, ց.1, գ.3, թ.1–13), Վրաստանը Ռուսական կայսրությանը միացնելու մասին 1801 թ. սեպտեմբերի 12-ի Ալեքսանդր 1-ին կայսեր մանիֆեստը (ձեռագիր տեքստը տե՛ս ՀԱԱ, ֆ, 151, ց.1, գ.388, թ.1 և շրջ.), Ռուսական կայսրության և Պարսկական պետության միջև 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի (տեքստը տե՛ս Договоры России 1869, 208–214) և Ռուսական կայսրության և Պարսկական պետության միջև 1828 թ. փետրվարի 10-ի (տեքստը տե՛ս Договоры России 1869, 214–222) հաշտության պայմանագրերով:

Այսրկովկասում հայ-ռուսական ռազմական համագործակցությունը սկզբնավորվել էր դեռևս 1722–1723 թթ.՝ Պյոտր 1-ին Կայսեր կողմից ձեռնարկված Պարսկական կամ Կասպիական արշավանքի ժամանակ (այդ մասին մանրամասն տե՛ս Խաչատրյան 1972): Արշավանքի ժամանակ կազմավորվեց և մինչև 1964 թ. իր գոյությունը պահպանեց հայկական հեծյալ զորամասը՝ «Հայկական էսկադրոնը», որի անձնակազմի թիվը հասնում էր 600-ի: Էսկադրոնի առաջին հրամանատարը Պետրոս Դի Խաչիկն էր, ում սպանվելուց (1724 թ.) հետո նրան փոխարինեց Լազար Խրիստաֆորովը (Աղազար Դի Խաչիկի), ում 1734 թ. շնորհվեց գեներալ–մայորի զինվորական կոչում (Գրիգորյան 1957, 10–11):

* Ստացվել է 06.06.2022 թ., ուղարկվել է գրախոսման 06.06.2022 թ., ընդունվել է տպագրության 05.08.2022 թ.:

Այդ համագործակցությունն ավելի ցայտուն դրսևորվեց 1804–1813 թթ. և, հատկապես, 1826–1828 թթ. Ռուս-պարսկական պատերազմներում (ռազմական գործողությունների թատերաբեմի քարտեզը տես ՀԱԱ, ֆ, 247, ց. 2, գ. 8, թ. 1–2), աչքի ընկան և ռուսական բանակի հաղթանակում վճռական դերակատարությունն ունեցան հայազգի զինվորականությունն ու հայ կամավորական ջոկատներն ու աշխարհազորային դրուժինաները:

1826 թ. հուլիսի 16-ին սկսված Ռուս-պարսկական հերթական պատերազմի սկզբին հայ կամավորականներն իրենց արիությամբ առաջինն աչքի ընկան Շուշիի բերդի (բերդի գլխավոր հատակագիծը տես ՀԱԱ, ֆ, 247, ց. 2, գ. 4, թ. 1) պաշտպանության ժամանակ: Բերդում, որը պաշարվեց պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի շուրջ 60 000-ոց զորքի (Երիցեանց 1894, 234) կողմից, փակվեցին գնդապետ Իոսիֆ Ռեուտի հրամանատարությամբ գործող ռուսական 42-րդ Եգերյան գնդի 6 վաշտ, իսկ 3 վաշտ (մեկ գումարտակ՝ փոխգնդապետ Նազիմկայի հրամանատարությամբ), մերժում են տեղի հայերի առաջարկը, այն է ուղեկցել լեռնային արահետով դեպի Շուշի, կտրված մնացին Զանգեզուրում (Потто 1902, 59–60): Արդյունքում, Ախ-Ղարաչայ գետի ափին գումարտակը (21 սպա մոտ 1000 զինվոր և երկու թնդանոթ) ոչնչացվում է պարսիկների կողմից, և միայն հայ գյուղացիության շնորհիվ փրկվում են 2 սպա և 6 զինվոր (Երիցեանց 1894, 235):

Ինչ վերաբերում է Շուշիի բերդի պաշտպանությանը (այդ մասին մանրամասն տես Потто 1903), որը ձգվեց 1826 թ. հուլիսի 25-ից մինչև սեպտեմբերի 10-ը, ապա այն պաշտպանում էին ռուսական գնդի շուրջ 2700 զինվորներն ու սպաները՝ 6 հրանոթով, 420 կոզակներ (Потто 1888, 68), ինչպես նաև 1500 հայ կամավորականները (Մեր հաղթանակները 2012, 51):

Բերդի պաշտպանների հերոսության շնորհիվ պարսիկներն այդպես էլ չկարողացան վերցնել բերդը, որի պաշարման վերացմանը նպաստեց հայազգի գեներալ-մայոր Վալերիան Մադաթովի հրամանատարությամբ գործող զորաջոկատի կողմից 1826 թ. սեպտեմբերի 3-ին Շամխորի ճակատամարտում (այդ մասին մանրամասն տես Потто 1907a), իսկ սեպտեմբերի 13-ին գեներալ-մայոր Վ. Մադաթովի ու հետևազորի գեներալ Իվան Պասկևիչի զորաջոկատների կողմից Ելիզավետպոլի ճակատամարտում[1] (այդ մասին մանրամասն տես Потто 1907б) պարսկական զորքերի ջախջախումը: Այս հաղթանակներից հետո գեներալ-լեյտենանտի զինվորական կոչման արժանացած Վ. Մադաթովի զորաջոկատի կազմում կռվում էին տարբեր տվյալներով 2 000-ից մինչև 6 000 հայ հեծյալ աշխարհազորայիններ (Русско–армянское сотрудничество 1978, 59, 95), սակայն ավելի հավանական թիվ պետք է ընդունել 2000-ը:

---

[1] Լրացուցիչ տես ռուս նշանավոր մարտական գեղանկարիչ Ֆրանց Ռուբոյի «Ճակատամարտ Ելիզավետպոլի տակ՝ 1826 թ. սեպտեմբերի 13-ին» և մեկ այլ ռուս նշանավոր մարտական գեղանկարիչ Վլադիմիր Մոշկովի (Մաշկովի) «Պարսիկների պարտությունը Ելիզավետպոլի Ճակատամարտում» կտավները: Կովկասյան պատերազմների թեմայով Ֆ. Ռուբոյի կտավների մասին մանրամասն տես Садовень 1955, 356–362, իսկ Կովկասյան պատերազմների թեմայով Վ. Մոշկովի կտավների մասին մանրամասն տես՝ նույն տեղում, 74–81:

Պատերազմում խիզախությամբ աչքի ընկան ևս երկու կամավորական հեծյալ ջոկատներ: Դրանցից առաջինը Շամշադինի ու Ղազախի հայ երիտասարդներից (շուրջ 500 հեծյալ) կազմված և Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի հրամանատարությամբ գործող հեծյալ ջոկատն[2] էր: Վերջինս ստեղծվել էր դեռևս 1804–1813 թթ. Ռուս-պարսկական պատերազմի սկզբին և ակտիվ մասնակցություն ունեցավ ինչպես այդ պատերազմին այնպես էլ 1826–1828 թթ. պատերազմին (ջոկատի մարտական ուղու մասին մանրամասն տե՛ս Գրիգորյան 1978):

Հայ երկրորդ հայտնի կամավորական հեծյալ ջոկատը, որը 1826–1828 թթ. պատերազմի ժամանակ աչքի ընկավ Գյումրիի մոտ և Փամբակում տեղի ունեցած մարտերում, գործում էր Մարտիրոս Վեկիլովի (Վեքիլյան) հրամանատարությամբ: Վերջինս «ցուցաբերած գերազանց հերոսության համար» արժանացավ ռազմական պարգևի և ստացավ պրապորշիկի զինվորական աստիճան (Գրիգորյան 1957, 136–137):

Վերը նշված հայկական կամավորական ջոկատներից բացի 1826–1828 թթ. պատերազմի ժամանակ կազմավորվեց հայ աշխարհազորային երեք դրուժինա[3]: Դրանց կազմավորման գործում գլխավոր նախաձեռնողի դերում հանդես եկավ Վրաստանի և Իմերեթի հայոց հոգևոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը[4]: Դեռևս պատերազմի սկզբին Թիֆլիսում կայացած զինվորական խորհրդի նիստից (նախագահությամբ՝ Առանձին կովկասյան կորպուսի հրամանատար, Հետևազորի գեներալ Ալեքսեյ Երմոլովի և մասնակցությամբ՝ արքեպիսկոպոս Ներսեսի) հետո 1826 թ. հուլիսի 29-ին արքեպիսկոպոս Ներսեսի ստորագրությամբ հայերեն և ռուսերեն լեզուներով հրապարակվում է հայտարարություն-շրջաբերական, որտեղ Այսրկովկասի հայությանը կոչ էր արվում. «Զէնք վեր առնել թշնամու դէմ» (շրջաբերականի ռուսերեն արխիվային բնագիր տարբերակը հրատարակված տե՛ս Русско-армянское сотрудничество 1978, 18–22, իսկ հայերեն տպագիր տարբերակը տե՛ս Երիցեանց 1894, 237–243):

Աշխարհազորային դրուժինաներ ստեղծելու վերաբերյալ արքեպիսկոպոս Ներսեսի և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ Հարություն Ալամդարյանի նախաձեռնությանը խանդավառությամբ արձագանքեց Այսրկովկասի հայ երիտասարդությունը, որի ներկայացուցիչները տարբեր բնակավայրերից սկսեցին հավաքվել Թիֆլիսում, որը աշխարհազորային դրուժինաների կազմավորման կենտրոնն էր: 1827 թ. մարտի վերջին կամավորագրվածների թիվը հասավ 214-ի, որից «Վրաստանից 67 հոգի (Թիֆլիզեցիք 52, Թիֆլիզի գաւառից 11, Սղնախից 3, Իմերեթից 1), Ղարաբաղից 9, Տաճկաստանցիք (արևմտահայեր–Հ. Ն.) 18 (Արզրումից,

---

[2] Լրացուցիչ տե՛ս նկարիչ Հ. Ռուխկյանի «Գրիգոր Մանուչարյանի հեծյալ ջոկատը մարտի պահին» կտավը:

[3] Դրուժինա –19-րդ դարում և 20-րդ դարասկզբին պատերազմական ժամանակաշրջանում Ռուսական բանակի կազմում կազմավորված աշխարհազորային ստորաբաժանում: Թվակազմով համարժեք էր հետևակային գումարտակին, երբեմն էլ հետևակային գնդին (Советская военная энциклопедия 1977, 265):

[4] 1843–1857 թվականներին եղել է Ամենայն հայոց կաթողիկոս՝ գահակալելով Ներսես Ա Աշտարակեցի անունով:

Ղարսից, Բայազէթից, Վանից, Բաղդատից և այլն) և Պարսից աշխարհներից 130 (Սալմաստից 67, Ուրմեցիք 35, Խոյեցիք 8, Էջմիածնեցիք 11, Երևանցիք 7, Նախիջևանցիք 2)... Հայոց զօրաց հրամանատար եղաւ կապիտան Եագոր Լազարեանը և նորա օգնական՝ պրապօրշչիկ Դաւիթ Ղորղանովը» (Երիցեանց 1894, 279–280):

Շուտով «մարտի 30-ին, աւագ չորեքշաբթի օր, հանդիսաւոր զօրանցք կատարեցաւ և Ներսէս ձիու վրայ հեծած, սրտաշարժ ճառով ոգևորեց իւր զինուորներուն, և քանի մը անգամ գունդը (դրուժինան–Հ. Ն.) առջևէն անցուց... և նուագածուաց երաժշտութեամբ և կեցցէներու գոռումներով, որոց Ներսէս կը պատասխանէր. «Ապրիք քաջեր, շնորհակալ եմ» (Օրմանեան 1927, 3499–3500):

1827 թ. մայիսի 11-ին հետևազորի գեներալ Ի. Պասկևիչը, Ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ, հետևազորի գեներալ Իվան Դիբիչին ուղղված զեկուցագրով, հայտնում է աշխարհազորային դրուժինաների կազմավորման գործընթացի հաջող իրականացման մասին (Գրիգորյան Ջ., Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը 19-րդ դարի սկզբին, Երևան, Հայպետհրատ, 1957, 145): Արդեն մայիսի 15-ին կամավորագրվածների թիվը հասել էր 600-ի, և «երկրորդ ծաղկազարդի կիրակի օրը, վանքի մայր եկեղիցին (Սբ. Գևորգ–Հ. Ն.) հանդիսապէս» և բազմաթիւ ռուս զօրավարներու (գեներալների–Հ. Ն.) ներկայութեամբ երդումի արարողութիւնն ու դրոշակի[5] օրհնութիւնը կատարուեցան, իսկ պարագային համեմատ ոգևորեալ և ոգևորիչ ատենաբանութիւնն ընել Ալամդարեան Յարութիւն քահանային վիճակեցաւ» (Օրմանեան 1927, 3499–3500): Վանքից արդեն դրուժինան «իւր դրոշակով և երաժշտութեամբ գնաց Ղաբաղ հրապարակը, ուր եկաւ գեներալ <Նիկոլայ> Սիպեագինը և, զօրահանդէս կատարելով շատ գոհ մնաց» (Երիցեանց 1894, 247):

Մայիսի 16-ին Թիֆլիսի զինվորական նահանգապետ, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Սիպյագինը հետևազորի գեներալ Ի. Պասկևիչին հայտնում է, որ Առաջին դրուժինան՝ թվով 117 մարդ, կազմավորված և սպառազինված պատրաստ է միանալու գործող զորքերին (Русско–армянское сотрудничество 1978, 130):

Հայկական առաջին դրուժինան, որի հրամանատարը Սումբատովն էր, Թիֆլիսից «մեկնեցաւ մայիսի 17-ին իւր դրօշակով դեպի Երևան» (Օրմանեան 1927, 3499–3500): Երևանի ճանապարհին դրուժինան համալրվեց և դրա թիվը հասավ հազարի (Լեո 1984, 419):

---

5 Հայկական աշխարհազորային երեք դրուժինաների մարտական դրոշները թեև տարբեր էին, սակայն որպես ընդհանրություն երեքի վրա էլ պարտադիր պատկերված էր Ռուսական կայսրության պետական զինանշանը. Երկգլխանի արծիվը՝ մեկ ձեռքում բռնած իշխանության խորհրդանիշ գավազանը, մյուս ձեռքում՝ գունդը, որը խորհրդանշում էր երկրի վրա ունեցած իշխանությունը (Տերությունը): Երկու դրոշների դեպքում՝ արծվի գլխավերևում պատկերված է կայսերական թագը, իսկ կրծքավանդակին՝ Սբ. Գևորգի պատկերը, իսկ մեկի դեպքում՝դրանք բացակայում են: Դրոշներից երկուսի դեպքում արծվի բերանից կախված է Նիկոլայ Առաջին կայսեր անվան սկզբնատառը: Երեք դրոշների համար որպես ընդհանրություն պետք է նշել նաև դրանց վրա առկա հայերեն լեզվով հոգևոր բնույթի նախադասությունների, ինչպես նաև երկուսի վրա՝ Հիսուս Քրիստոսի պատկերի առկայությունը (Դրոշները տես ՀՊԹ, ՆՊՖ 1011, ՀՊԹ, ՆՊՖ 1012, ՀՊԹ, ՆՊՖ 1013), իսկ դրանց լուսանկարները տես Հավելվածում (նկ. 1, նկ. 2, նկ. 3):

Հայկական աշխարհազորային դրուժինաների կազմավորման գործընթացը աստիճանաբար կատարելագործվում էր: Երկրորդ դրուժինայի կազմավորմանն ընդառաջ 1827 թ. մայիսի 24-ին գեներալ-ադյուտանտ Ն. Սիպյագինի ստորագրությամբ հրատարակվում է պաշտոնական հայտարարություն՝ «Առաջադրութիւն Հայոց նոր սարքվող (կազմավորվող – Հ. Ն.) զօրքի համար.

1. Հայոց զօրքը կունենայ բատալիօններ (գումարտակներ – Հ. Ն.):
2. Բատալիօնի մէջ են մտնում Հայք (ազգությամբ հայերը – Հ. Ն.) իրանց սեպհական ցանկութեամբ:
3. Նրանք վեր են կալնվում 18 տարեկանիցն մինչև 30 տարեկան մարդիկ...
5. Նրանք պէտք է կապվին միայն ծառայել էնքան ժամանակ, քանի կոիվն Ղզլբաշի (նկատի ունի պարսիկների – Հ. Ն.) հետ կու երկարվի, իժում նրանք կու ազատվին գնալ իրենց տներն, կամ մտնել ծառայութեան զօրքի (նկատի ունի Ռուսական բանակը – Հ. Ն.) մէջ...
9. Կազմվածք (կառուցվածք – Հ. Ն.) զինուորութեան՝
   Շտաբ-օֆիցեր (շտաբային սպա, դրուժինայի հրամանատար – Հ. Ն.) – 1
   Կապիտանք – 2
   Շտաբս-Կապիտանք – 2
   Պօռուտչիկ – 4
   Պօդպօռուտչիկ – 4
   Խազինադար (գանձապետ – Հ. Ն.) – 1
   Ադիւտանտ – 1
   Զուռնա ածողք (փողահարներ – Հ. Ն.) – 4
   Բարաբան ածողք (թմբկահարներ – Հ. Ն.) – 4
   Ունտէր-օֆիցերք (ենթասպաներ – Հ. Ն.) – 80
   Զինուորք – 800
   Զինուորաց սելապանք (սայլապաններ – Հ. Ն.) – 40
10. Օֆիցերների տեղ ջոկվում են ունտէր-օֆիցերներեմէն հրամանաւ գլխավոր զօրապետին, իրանց ոչաղութեան, խելքի և ջերմեռանդութեան զօրա:
11. Իրանց յատուկ քաջութեան համար կու յայտնըվին վարձ ստանալու առաջին օֆիցերական չինով (կոչումով – Հ. Ն.):
12. Զարթնէ էստուրն, իւրաքանչիւր բատալիօնի մեծաւորն (հրամանատարը – Հ. Ն.) կուլի Շտաբս-օֆիցեր կամ Կապիտան ներկայ ծառայութեան, որ պիտի լինի հայոցմէ (հայ – Հ. Ն.):
13. Ամեն բատալիօնի համար նշանակվում են քահանայ և հեքիմ (բժիշկ – Հ. Ն.):
14. Ամեն բատալիօնն կու բաժանվի յութն հարիւրս: Հարիւրն ի տասն տասնեակս:
15. Իւրաքանչիւր զինուորի խազնիցն կուտան թվանք (հրացան – Հ. Ն.), թասմա գոտիկով պարկ, երեսուն գցելու գուլլով (գնդակներով – Հ. Ն.), բարութով (վառոդով – Հ. Նազարյան) և տասն չախմախի քարով (կայծքարով – Հ. Ն.):

16. Իւրաքանչիւր զինուորն պիտի ունենայ իւր սեպհական խանջալն (դաշույնը – Հ. Ն.) և տիլօյի պարկն ուսոյ վրայ չորս օրվան պաշար տանելու համար:
17. ՈՒնտէր – օֆիցերներն ունենան թուր խանչալի տեղ:
18. Օֆիցերներն ունենան մին ջուխտ (մեկ զույգ – Հ. Ն.) դաբանչա (ատրճանակ – Հ. Ն.) և թուր[6]:
19. Շուրեր՝ (համազգեստ – Հ. Ն.).
Չուխէն (վերարկուն – Հ. Ն.) բօզ մահուտից (բրդյա գործվածքից – Հ. Ն.):
Արխալուխն (կոճկավոր վերնազգեստ – Հ. Ն.) նաշուրի (կտորի – Հ. Ն.) մուգ ռանգն (երանգը – Հ. Ն.):
Շալվարն (տաբատ – Հ. Ն.) նաշուրի էլի էն (նույն – Հ. Ն.) ռանգը:
Գդակն (գլխարկը – Հ. Ն.) վրացու նման:
Եափնջի (առանց թևերի, ուղղանկյուն ուսերով, լայն քղանցքով երկար թիկնոց – Հ. Ն.):
20. Ամեն չինովնիկ (պաշտոնյա – Հ. Ն.) ստանայ տօնլուխ (աշխատավարձ – Հ. Ն.) ինչպէս զինուորական աստիճանաւորներն ներկայ ծառայութեան:
21 Շուրի տեղ ստանան զինուորքն 10 մանէթ (ռուբլի – Հ. Ն.) սպիտակ դրամ մէկ տարումն, և ունտէր – օֆիցերներն 15 մանէթ: Էս փեղովն պիտի շուրեր կարել իրանց համար, մինչև կառավարութիւնն կարգսցէ (կորոշի – Հ. Ն.) տալ նրանց շուրեր խազինիցն (գանձարանից – Հ. Ն.):
22. Էդ զօրքին կուտան չադիրներ (վրաններ – Հ. Ն.)...(Ընդհանուր 29 կետերից բաղկացած հայտարարության ամբողջական տեքստը տես Երիցեանց 1894, 276 – 279):

Երկրորդ դրուժինայի կազմավորումը տևեց 2-ից 3 օր: Հունիսի 2-ին գեներալ-ադյուտանտ Ն. Սիպյագինը հետևազորի գեներալ Ի. Դիբիչին ուղղված զեկուցագրում հայտնում էր. «Հայկական երկրորդ դրուժինան իմ հսկողությամբ կազմավորված է Թիֆլիսում, 100 մարդուց[7], սպառազինված և ապահովված է արշավի համար անհրաժեշտ ամեն ինչով, որը Խերսոնյան գրենադերյան գնդի պոդպորուչիկ Ակիմովի հրամանատարությամբ ներկայումս Թիֆլիսից ուղևորվել է Երևանի մոտ գործող զորքին միանալու համար» (Գրիգորյան 1957, 147):

Արդեն օգոստոսին Թիֆլիսում կազմավորվում է Հայկական երրորդ դրուժինան, որի մասին գեներալ-ադյուտանտ Ն. Սիպյագինը հետևազորի գեներալ

---

[6] Այդ ժամանակաշրջանի սառը զենքի, այդ թվում՝ թրերի ու դաշույնների, և հրազենի, այդ թվում՝ կայծքարային ատրճանակների և կայծքարային հրացանների, արժեքավոր շատ նմուշներ պահվում են ՀՊԹ Զենքի ֆոնդում: Այդպիսի մեկ նմուշի՝ կայծքարային ատրճանակի՝ պատրաստված 1822 թ. Ռուսական կայսրության խոշոր զինագործական կենտրոն Տուլայի զինագործարանում, լուսանկարը տես Հավելվածում (նկ. 4):

[7] Հատկանշական է, որ Մայիսի 28-ին գեներալ-ադյուտանտ Ն. Սիպյագինը հետևազորի գեներալ Իվան Պասկևիչին հայտնում է, որ Հայկական երկրորդ դրուժինան կազմված էր 118 մարդուց, որոնց մեջ կային նաև ազգությամբ վրացիներ (Русско – армянское сотрудничество 1978, 133):

Ի. Դիբիչին ուղղված զեկուցագրում հայտնում էր. «Այստեղ կազմավորված Հայկական երրորդ դրուժինան թվով 67 մարդ, պաշտոնաթող կապիտան Բեբուրովի (հավանաբար պետք է լինի Բեբութով – Հ. Ն.) հրամանատարությամբ այս ամսի 21-ին անհրաժեշտ ամեն ինչով ապահովված ուղևորվեց դեպի Երևանի, ըստ տրված երթուղու, գեներալ-լեյտենանտ <Աֆանասի> Կրասովսկու մոտ գործող զորախմբին[8] միանալու համար» (Գրիգորյան 1957, 147 – 148):

Հայկական երեք աշխարհազորային դրուժինաներն անցան փայլուն մարտական ուղի: Նրանք մասնակցեցին պատերազմի գլխավոր ճակատամարտերից շատերին այդ թվում Էջմիածնի ազատագրմանն (1927 թ. ապրիլի 13-ին) ու հերոսական պաշտպանությանը (այդ մասին մանրամասն տես Потто 1907в), Նախիջևանի ազատագրմանը (1827 թ. հունիսի 26-ին), Օշականի ճակատամարտին[9] (1827 թ. օգոստոսի 17-ին), և ռազմավարական նշանակության բերդերի, այդ թվում Աբասաբադի բերդի[10] (1827 թ. հուլիսի 7-ին), Սարդարաբադի բերդի[11] (1827 թ. սեպտեմբերի 20-ին) և Երևանի բերդի[12] ազատագրմանը (1827 թ. հոկտեմբերի 1-ին):

---

8 20-րդ հետևակային դիվիզիա:

9 1831 թ. Եփրեմ Ա Զորագեղցի Ամենայն հայոց կաթողիկոսը (1809 – 1830) դիմում է Ռուսական կայսրության իշխանություններին՝ խնդրելով իրավունք տալ՝ Էջմիածնից 4 վերստ հեռավորության վրա, որտեղ 1827 թ. օգոստոսի 17-ին տեղի էր ունեցել ճակատամարտը, կանգնեցնելու հուշակոթող: Վերջինիս պատվանդանին՝ պղնձե տախտակների վրա, նախատեսվում էր գրել ճակատամարտին մասնակցած ստորաբաժանումների և նրանց հրամանատարների անունները: Ռուս ինժեներ, ռուսական բանակի պորուչիկ Կոմպանեյսկին պատրաստեց կոթողի նախագիծը, որով նախատեսվում էր, որ այն ունենալու էր 11 սաժեն բարձրություն: Իր հաջորդի՝ Հովհաննես Ը Կարբեցի ամենայն հայոց կաթողիկոսի օրոք (1831 – 1842)՝ Եփրեմը կրկնում է իր առաջարկությունը: Այս հարցով Հայկական մարզի քաղաքացիական մասի կառավարիչ, հետևազորի – գեներալ, բարոն Գրիգորի Ռոզենը 1831 թ. դեկտեմբերի 21-ին նամակով դիմում է Ռուսական կայսրության Ներքին գործերի նախարար Դմիտրի Բլուդովին: Շուտով կայսր Նիկոլայ 1-ինը (1825 – 1855) տալիս է իր համաձայությունը: Արդյունքում, 1833 թ. մայիսի 9-ին՝ Սբ. Նիկողայոս Սքանչելագործ հայրապետի տոնի օրը, Եփրեմ և Հովհաննես կաթողիկոսները մեծ հանդիսավորությամբ կատարեցին հուշարձանի հիմնարկեքը, իսկ շինարարությունն ավարտվեց հաջորդ տարի (Երիցեանց 1894, 294 – 295): Հուշակոթողը մինչև օրս կանգուն է:

10 Բրիտանացի ռազմական ինժեներների մասնակցությամբ Արաքս գետի ափին կառուցված Աբասաբադ բերդի գրավման մասին մանրամասն տես Потто 1907г: Լրացուցիչ տես Վ. Մոշկովի «Պարսկական Աբասաբադ բերդի հանձնումը՝ 1807 թ. հուլիսի 7-ին» կտավը:

11 Սարդարաբադի բերդը կառուցվել էր Երևանի սարդար Հուսեյն խանի կողմից 1815 – 1817 թվականներին՝ ֆրանսիացի ռազմական ինժեներների մասնակցությամբ: Բերդն ուներ քառանկյուն ձև, պարիսպները երկշարք և բարձր էին, մեծ և ամուր էին բուրգերն ու դարպասները: Լրացուցիչ տես Վ. Մոշկովի «Պարսկական Սարդարաբադ բերդի գրավումը գրոհով՝ սեպտեմբերի 20-ին» կտավը:

12 Երևանի բերդը կանգնած էր համանուն քաղաքի հարավային ծայրամասում, Զանգու (Հրազդան) գետի բարձր ու ժայռոտ ափին: Այն երեք կողմերից շրջափակված էր երկշարք պարիսպներով: Ներքին պարիսպը, որ կառուցված էր աղյուսից ու քարից, բավական բարձր էր ու հաստ և ուներ 17 բուրգ: Ներքին պարսպից 32 – 40 մետր հեռավորության վրա գտնվում էր արտաքին պարիսպը՝ կառուցված կավից ու քարից: Սա համեմատաբար բարակ ու ցածր էր: Բերդի շուրջը փորված էին լայն ու խոր փոսեր, որոնց մի մասը լցված էր ջրով (Բերդի հատակագիծը կազմված ռուսական զորքերի շտաբում տես ՀԱԱ, ֆ. 247, ց. 1, գ. 120, թ. 1 – 2): Սեպտեմբերի 25-ից սկսած ռուսական հրետանին Երևանի բեր-

Ռուս-պարսկական պատերազմում ռուսական բանակին մատուցած ծառայությունների և հայկական կամավորական դրուժինաների կազմավորման գործում ունեցած մեծ ավանդի համար ռուսաց կայսր Նիկոլայ 1-ի 1828 թ. հունվարի 25-ի հրովարտակով Ներսես արքեպիսկոպոսը պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով (հրովարտակը տես ՀԱԱ, ֆ, 1389, ց.1, գ.13, թ.11)։ Ավելի ուշ Նիկոլայ 1-ի 1828 թ. մարտի 15-ի հրովարտակով Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքում կազմավորվեց վարչական նոր միավոր՝ Հայկական մարզը (հրովարտակը տես ՀԱԱ, ֆ, 1389, ց.1, գ.13, թ.12)։

Այսպիսով, հայկական կամավորական ջոկատները և, հատկապես, դրուժինաները մասնակցելով խոշոր ճակատամարտերին և ռազմավարական նշանակության բերդերի գրավմանը՝ մեծ ավանդ ունեցան պատերազմում ռուսական բանակի հաղթանակի և պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրման գործում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվային փաստաթղթեր

ՀԱԱ, ֆ, 151, ց.1, գ.388
ՀԱԱ, ֆ.247, ց.1, գ.120
ՀԱԱ, ֆ.247, ց.2, գ.4
ՀԱԱ, ֆ.247, ց.2, գ.8,
ՀԱԱ, ֆ.501, ց.1, գ.3
ՀԱԱ, ֆ.1389, ց.1, գ.13

Թանգարանային առարկաներ

ՀՊԹ, Ա 4103
ՀՊԹ, ՆՊՖ 1010ա
ՀՊԹ, ՆՊՖ 1010բ

դը ենթարկեց էր ուժեղ ռմբակոծության։ Արդեն ամսի 28-ից գործի են դրվում 14 պաշարողական հզոր թնդանոթներ։ Միայն այդ գիշեր քաղաքի վրա թափվում են ավելի քան 1000 արկ։ Հայ մեծանուն գրող Խաչատուր Աբովյանն այդ օրերի մասին իր «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասերի» պատմավեպում գրում է. «Ամսի 25-ն էր, որ Երևանու բերդը ծխումը կորավ... 5 օր 5 գիշեր սար ու ձոր դրմբում, դմբդմբում էր։ Հենց գիտես՝ Սոդոմ-Գոմորի քուքուրթն ու կրակը էսօր ա վեր գալիս։ Երևանու, բերդը ձեթը հատած պատրուգի պես, թե մեկ ճրթճրթում էլ էր, մեկ սհաթ քիմի, էլ ետ հանգչում, խավարում էր։ Էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել» (Աբովյան 1984, 227)։ Հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական զորքերի մի ստորաբաժանում գրավում է բերդի հյուսիսարևելյան բուրգը, իսկ մեկ այլս տորաբաժանում, մոտենալով հյուսիսային դարպասին և խորտակելով այն, մտնում բերդ։ Երևանի նշանավոր բերդը գրավվում է։ Խանի կայազորը, որ բաղկացած էր 4.000 սարբազներից (զինվորներից), անձնատուր են լինում։ Գերի են վերցվում սարդարի եղբայր Հասան խանը, 7 այլ խաներ, իսկ որպես ռազմավար վերցվեցին 4 պարսկական դրոշակներ (Ռազմավար դրոշակներից երկուսը տես ՀՊԹ, ՆՊՖ 1010ա, ՀՊԹ, ՆՊՖ 1010բ, իսկ դրանց լուսանկարները տես Հավելվածում (նկ.5, նկ.6) 49 փոքր և 50 մեծ թնդանոթներ (Երիցեանց 1894, 304)։ Բերդի գրավման մասին մանրամասն տես Потто 1907д։ Լրացուցիչ տես Վ.Մոշկովի «Պարսկական Երևանի բերդի գրավումը գրոհով՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ին» և Ֆ.Ռուբոյի «Երևանի բերդի հանձնումը՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ին» նշանավոր կտավները։

ՀՊԹ, ՆՊՖ 1011

ՀՊԹ, ՆՊՖ 1012

ՀՊԹ, ՆՊՖ 1012

Կտավներ

Հ. Ռուխկյան. «Գրիգոր Մանուչարյանի հեծյալ ջոկատը մարտի պահին»:

Վ. Մոշկով (Մաշկով). «Պարսիկների պարտությունը Ելիզավետպոլի Ճակատամարտում»:

Վ. Մոշկով (Մաշկով). «Պարսկական Աբասաբադ բերդի հանձնումը՝ 1807 թ. հուլիսի 7-ին»:

Վ. Մոշկով (Մաշկով). «Պարսկական Սարդարաբադ բերդի գրավումը գրոհով՝ 1827 թ. սեպտեմբերի 20-ին»:

Վ. Մոշկով (Մաշկով). «Պարսկական Երևանի բերդի գրավումը գրոհով՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ին»:

Ֆ. Ռուբո. «Ճակատամարտ Ելիզավետպոլի տակ՝ 1826 թ. սեպտեմբերի 13-ին»:

Ֆ. Ռուբո. «Երևանի բերդի հանձնումը՝ հոկտեմբերի 1-ին»:

Գրականություն

ԱԲՈՎՅԱՆ 1984 – Աբովյան Խ., Երկեր, կազմեց՝ Հ. Հ. Ֆելեքյան, Առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Հ. Հակոբյանի, Երևան, 1984:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1978 – Գրիգորյան Ա., Գրիգոր Մանուչարյանի պարտիզանական ջոկատը (Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակի առթիվ), Երևան, 1978:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1957 – Գրիգորյան Զ., Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը 19-րդ դարի սկզբին, Երևան, 1957:

ԵՐԻՑԵԱՆՑ 1894 – Երիցեանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում. Մասն Ա (1800 - 1832 թթ.), 1894:

ԼԵՈ 1984 – Լեո, Երկերի ժողովածու, Հատոր 4, Հայոց պատմություն, Ժամանակակից պատմություն (դարի առաջին կես), Գիրք առաջին, Երևան, 1984:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 1972 – Խաչատրյան Հ., Հայ և ռուս ժողովուրդների զինակցությունը ռուսական բանակի կասպիական արշավանքում, Երևան, 1972:

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ 2012 – Մեր հաղթանակները. Հատոր Դ, Երևան, 2012:

ՕՐՄԱՆԵԱՆ 1927 – Օրմանեան Մ., Ազգապատում. Մասն երրորդ. 1808 տարիէն մինչև 1909, 1927:

ДОГОВОРЫ РОССІИ 1869 – Договоры Россіи съ Востокомъ. Политическіе и торговые. Под ред. Юзефович Т., СПб, 1869.

ПОТТО 1902 – Потто В., Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ-Вани и Акопъ-Юзбаши Атабековы), Тифлисъ, 1902.

ПОТТО 1903 – Потто В., Геройская оборона крепости Шуши, изд. 2-е, С.-Петербургъ, 1903.

ПОТТО 1888 – Потто В., Кавказская война въ отдельныхъ очеркахъ, эпизодахъ, легендахъ и біографіяхъ. Томъ 3, изд. 2-е, С.-Петербургъ, 1888.

ПОТТО 1907а – Потто В., Битва подъ Шамхоромъ (Князь Мадатовъ), 1907.

ПОТТО 1907б – Потто В., Елисаветпольская победа, изд. 2-е, С.-Петербургъ, 1907.

ПОТТО 1907в – Потто В., Взятіе Аббасъ-Абада и Джеванбулакскій бой. Изд. 2-е, С.-Петербургъ, 1907.

ПОТТО 1907г – Потто В., Занятіе Эчмиадзина, изд. 2-е, С.-Петербургъ, 1907

ПОТТО 1907д – Потто В., Покореніе Эривани. Изд. 2-е, С.-Петербургъ, 1907.

РУССКО-АРМЯНСКОЕ СОТРУДНИЧЕСТВО 1978 – Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826 – 1828 гг. Сборник документов. Главных редактор, Арутюнян А., Составители Эвоян В., Казарян Э., Мирзоян С., Оганесян Дж., Ереван, 1978.

Садовень 1955 – Садовень В. В. Русские художники баталисты. XVIII – XIX веков, Москва, 1955.

СОВЕТСКАЯ ВОЕННАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ 1977 – Советская военная энциклопедия. Том 3, Москва, 1977.

Hayk Nazaryan
PhD in History
History Museum of Armenia
nazaryan_h90.90@mail.ru

THE STAFF LIST, NUMERICAL STRENGTH, UNIFORM, ARMAMENT AND MARTIAL FLAGS OF ARMENIAN MILITIA DRUZHINAS DURING THE RUSSO-PERSIAN WAR (1826 – 1828)

Keywords: Russo-Persian War, Transcaucasus, Russian Empire, Russian Army, Volunteer Detachment, Militia Druzhina, Archbishop Nerses.

During the Russo-Persian War (1826 – 1828) Armenian Volunteer Detachments were organized and three Militia Druzhinas were formed. The main organizer of this process was the spiritual leader of Armenians in Georgia, Archbishop Nerses.

The three Armenian Militia Druzhinas passed a brilliant martial way. They took part at the main battles of the war and liberated the strategic fortresses. As a result they had their great contribution in the victory of Russian Army and the liberation of Eastern Armenia from the Persian yoke.

Айк Назарян
Кандидат исторических наук
Музей истории Армении
nazaryan_h90.90@mail.ru

ШТАТНЫЙ СОСТАВ, ЧИСЛЕННОСТЬ, ОБМУНДИРОВАНИЕ, ВООРУЖЕНИЕ И БОЕВЫЕ ФЛАГИ АРМЯНСКИХ ОПОЛЧЕНЧЕСКИЙ ДРУЖИН, УЧАСТВОВАВШИХ В РУССКО-ПЕРСИДСКОЙ ВОЙНЕ 1826 – 1828 ГГ.

Ключевые слова: Русско-персидская война, Закавказье, Российская империя, Русская армия, добровольческий отряд, ополченческая дружина, архиепископ Нерсес.

Во время русско-персидской войны 1826 – 1828 гг. было создано несколько армянских добровольческих отрядов, а, по инициативе Главы Грузино-Имеретинской армянской епархии архиепископа Нерсеса, сформированы три армянские ополченческие дружины.

Ополченческие дружины прошли блестящий боевой путь, принимая участие в главных сражениях войны и освобождении крепостей стратегического назначения, тем самым внесли большой вклад в победу Русской армии в этой войне и освобождении

Восточной Армении от персидского ига.